

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մաների գեղագիտական զարգացման գործում «Էքսկուրսիա դեպի խաղալիքների արտադրական ֆաբրիկա», «Տիկնիկային թատրոն». դրանց դերը և նշանակությունը

Հաստատություն՝ թիվ 150 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Մարիամ Հարությունյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Սաների գեղարվեստական զարգացման գործում «Էքսկուրսիա դեպի խաղալիքների արտադրական ֆաբրիկա», «Տիկնիկային թատրոն», դրանց դերը և նշանակությունը.....	4
Խաղալիքի դերը և նշանակությունը.....	7
Խաղի դերը նախադպրոցական կրթության մեջ Պարապմունքի պլան	9
Եզրակացություն.....	14
Գրականության ցանկ	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*«Միրում էք երեխային՝ խաղացեք նրա հետ, խաղացեք իսկական, անկեղծ
և դա կլինի ձեր ամենամեծ նվերը նրան»:*

Ա. Մ. Մակարենկո

Խաղը երեխայի կյանքի բնականոն զարգացման գործընթաց է: Այն երեխային հնավորություն է տալիս զննել, ստուգել, զարգացնել մտքեր, գաղափարներ և փորձելով ու սխալվելով սովորել: Երեխան զարգանում է խաղի միջոցով, իրեն շրջապատող աշխարհը ճանաչում, ընկալում է խաղի միջոցով:

Առաջին վերնագրում խոսել ենք մի քանի տեսակի խաղերի մասին, որոնք հաջորդում են իրար՝ երեխայի զարգացմանը զուգընթաց: Այդպիսիք են՝ ֆունկցիոնալ, սիմվոլիկ, դերային, ուսումնական, ըստ կանոնների խաղերը: Այդ խաղերի նպատակն ու խնդիրներն են՝ զարգացնել երեխայի ստեղծագործական երևակայությունը, բանավոր խոսքը, գեղագիտական ճաշակը, տեսածի, լսածի վերաբերյալ խոսելու, իրավիճակը շտկելու, ինքնարտահայտվելու կարողությունը, հասակակիցների և մեծերի հետ ազատ և անկաշկանդ շփումը, նախաձեռնելու, համախմբված աշխատելու հմտությունների ձեռքբերումը, սերմանում աշխատասիրություն, պատասխանատվություն, ուշադրություն և ազատագրում բարդություններից:

Հաջորդ վերնագրում խոսել ենք խաղալիքի անգնահատելի դերի ու նշանակության մասին երեխայի կյանքում: Ինչպես խաղը, այնպես էլ խաղալիքն ուղեկցում է երեխային նախադպրոցական մանկության ամբողջ շրջանում՝ համարվելով խաղային գործունեության հիմնական միջոցը: Յուրաքանչյուր տարիքի երեխաների համար բնորոշ են առանձնահատուկ խաղալիքներ:

Իսկ վերջում մշակված պարապմունքի օրինակով, առաջնորդվելով՝ նպատակ, խթանիչ, իմաստի ընկալում և կշռադատում քայլերի հաջորդականությամբ, գործնականում ցույց ենք տալիս, թե ինչպես են պատրաստում խաղալիքը ու խաղի միջոցով զարգացնում երեխայի խոսքը, հոգատարությունը և աշխարհաճանաչումը:

Մաների գեղարվեստական զարգացման գործում
«Էքսկուրսիա դեպի խաղալիքների արտադրական ֆաբրիկա»,
«Տիկնիկային թատրոն». դրանց դերը և նշանակությունը

Բոլորին հայտնի է, որ նախադպրոցական տարիքում երեխայի հիմնական գործունեությունը խաղն է: Խաղի շնորհիվ երեխաներն ավելի դիտունակ են դառնում, համեմատում և դասակարգում առարակներն՝ ըստ ունեցած հատկանիշների, զարգացնում ընկալումները, խոսքը, ուշադրությունը: Խաղային գործունեությունը, ինչպես գործունեության տեսակ, ունի իր կառուցվածքը՝ նպատակ, դրդապատճառ, իրականացման միջոցներ, գործողությունների պլան և արդյունք:

Խաղը երեխաների ճանաչողական հնարավորությունների ընդլայնման էական գործոն է: Այն նպաստում է հուզական ապրումների իրականության ոլորտների զգացմունքային, կերպարային յուրացմանը: Խաղը սերտ միահյուսված է աշխատանքային գործունեության հետ: Խաղը ապահովում է ազատության զգացում, օգնում է լիարժեք բացահայտել իրեն, մասնակցել մանկական հասարակությանը, որը կառուցվում է հավասարների ազատ հաղորդակցման վրա: Խաղը ունի անգնահատելի հոգեթերապևտիկ նշանակություն:

Խաղի կարևոր հատկանիշներից է հուզականությունը: Խաղի ընթացքում երեխաները ստանում են մեծ բավականություն, դրսևորում են ազատ ստեղծագործական գործունեություն: Խաղերի ընթացքում երեխան հանդես է գալիս իր նախաձեռնությամբ, նա պետք է կարողանա օգնել ընկերոջը, հաղթահարել գործողություններ՝ հրանահանգներին համապատասխան: Խաղերը օգնում են բացահայտելու երեխաների ճանաչողական հետաքրքրությունները, ընկալելու իրական աշխարհը, օգնում են կատարելու հետազոտական և ստեղծագործական որոնումներ, նպաստում են երևակայության զարգացմանը և սովորելու ցանկությանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության բովանդակության խնդիրներն իրականացվում են տարբեր մեթոդների դասավանդման ընթացքում, որոնք նպաստում են մտավոր, ֆիզիկական, աշխատանքային, գեղագիտական դաստիարակության զարգացմանը:

Այսօր պարապմունքների, խաղերի, էքսկուրսիաների կազմակերպման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ավանդական, ինտերակտիվ և համագործակցային մեթոդների կիրառմամբ:

Խառը տարիքային խմբերում դաստիարակը պետք է տիրապետի յուրաքանչյուր ենթախմբում ընդգրկված տարիքային փուլին ներկայացվող գործունեության ձևերին, դրանց տեսակներին, ինչպես նաև խաղային գործունեության կազմակերպման մեթոդներին և հնարներին:

Կանոնակարգով հատկացված ժամերին երեխաների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնել տարբեր տեսակի խաղերի նկատմամբ, դաստիարակել խաղալու կարողություն:

Հատուկ ուշադրություն պետք է նվիրել խաղերի թեմաների և բովանդակության զարգացմանն ու հարստացմանը, խրախուսել երեխաների ստեղծագործական նախաձեռնությունը, մտահղացումը:

Ավագ խմբի երեխաների երևակայության և հմտությունների պաշարը խաղերը դարձնում են առավել բազմազան և բարդ: Երեխայի անձնավորության ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է խաղի բովանդակությունը, ինչն արտացոլում է կյանքի և շրջապատի, իրականության դրական կողմերը, ինչպես նաև ազգային ավանդույթները, կենցաղի և մշակույթի խաղային տարրերը: Այդպիսիք կարող են լինել ստեղծագործական, շարժական, մարզական, կառուցողական, դիդակտիկ, երաժշտական խաղերը, խաղ-բեմականացումները:

Կարելի է առաձնացնել մի քանի տեսակի խաղեր, որոնք հաջորդում են իրար՝ երեխայի զարգացմանը զուգընթաց՝

Տունկցիոնալ խաղերի հիմնական դրդապատճառը հաճելի հույզերն ունենալն է, դիտվում է մարդու ողջ կյանքի ընթացքում, բայց որպես առաջատար տեսակ պահպանվում է մինչև 2 տարեկան հասակը:

Միմվոլիկ խաղերն այն խաղերն են, երբ մի առարկային վերաբերվում են որպես ուրիշի, որը սվյալ պահին գոյություն չունի, օրինակ, երբ երեխան վերցնում է փայտը, հեծնում և վերաբերվում է դրան ինչպես ձիու:

Ենթադրվում է, որ հենց այս խաղերում է երեխայի մոտ ձևավորվում և ամրապնդվում հաջորդականությունն ընթռնելու կարողությունը:

Դերային խաղերը սկսում են առաջանալ արդեն 3-4 տարեկանում: այս խաղերով երեխան ընդօրինակում է մեծահասակների վարքը, նրանց դերերը՝ հոր, մոր, բժշկի, մանկավարժի և այլն: Դերային խաղերը նպաստում են սոցիալական հմտությունների ձևավորմանը:

Խաղեր՝ ըստ կանոնների: Այս խաղերը երեխաների մոտ ձևավորվում են կանոններին ենթարկվելու կարողություն, խաղը ունենում է կանոններ և բոլորը ենթարկվում են այդ կանոններին:

Ուսումնական խաղը օգտագործվում է որպես ուսուցման և դաստիարակության միջոց: Ուսումնական խաղի անվան տակ պետք է նկատի ունենալ այնպիսի գործունեություն, որի ընթացքում երեխաները ստանում են որոշակի գիտելիքներ և ունակություններ: Ուստի, ուսումնական խաղը նախատեսվում է ուսուցանելու համար: Ուսումնական խաղերի նպատակն է ինչ որ բան սովորեցնել երեխաներին, մարզել և զարգացնել նրանց մտավոր կարողությունները, մշակել բնավորությունը: Ուսումնական խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, խաղի կանոնների կատարումը նպաստում է մտածողության, երևակայության, հիշողության և այլ հոգեկան գործընթացների դաստիարակմանը:

Դերային խաղը ուսման և փորձի ձեռքբերման արդյունավետ ձևերից մեկն է, որը կարող է նպաստել երեխաների վարքի պատճառները հասկանալու ունակությանը: Դերային խաղի առավելությունն այն է, որ երեխան կամավոր և հաճույքով է ենթարկվում խաղի կանոններին: Սա դարձնում է երեխային ավելի կշռադատված և նախաձեռնող: Միննույն ժամանակ դերային խաղի միջոցով երեխաները սովորում են գնահատել, վերհսկել իրեն, թե ինչ են անում իրականում, ինչ են ուզում: Դերային խաղը դաստիարակության և կրթության զարգացման միջոց է, որը ձևավորում է երեխայի անհատականությունը: Դերային խաղը ուսման և փորձի ձեռքբերման արդյունավետ ձևերից մեկն է, որը կարող է նպաստել երեխայի վարքի պատճառները հասկանալու ունակությանը: Երեխաները շատ ուշադիր են և ընդօրինակող, արտացոլում են այն, ինչը տեսնում են և լսում են: Օգտագործելով խոսքը, երեխան շփման մեջ է մտնում, համագործակցում է մյուսների հետ: Երբեմն ծնողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը բացասաբար է ազդում երեխայի զարգացման, նրա բանավոր խոսքի զարգացման վրա: Պարբերաբար երեխայի նկատմամբ անտարբերությունը վատ է ազդում երեխայի հոգեկան վիճակի վրա, երեխան դառնում է ագրեսիվ,

նյարդային, ամաչկոտ, տրամադրության անկումներով: Եվ այս ամենը գալիս է ծնողների կողմից դերային խաղերը երեխայի կյանքում չկարևորելուց: Մա արդեն ազդում է երեխաների միջանձնային հարաբերությունների վրա:

Միջանձնային հարաբերությունները ստեղծվում են իրավիճակների դեպքում՝ խաղի ժամանակ: Երբ երեխան խաղալիք է ուզում ընկերոջից, պետք է խոսի նրա հետ, հարցնի, մտերմանա և առաջարկի խաղալ միասին: Դերային խաղի միջոցով ստեղծվում է կապ, միջանձնային հարաբերություն երեխաների հետ: Այս կապը դրական է ազդում երեխայի զարգացման գործում, երեխան ազատվում է բարդույթներից, մեկուսանալու ցանկությունից, ձեռք է բերում ինքնավստահություն, հետագայում դպրոցում երեխաների համար հեշտ է դառնում շփումը իր հասակակիցների, ուսուցիչների հետ: Երեխաները արդեն նախադպրոցական տարիքից հաղթահարում են իրենց վախերը, ավելի հեշտ և բնականոն է ստացվում շփումները մեծահասակների հետ:

Խաղալիքի դերը և նշանակությունը

Խաղալիքի դերն ու նշանակությունը անգնահատելի է երեխայի կյանքում: Ինչպես և խաղը՝ խաղալիքն ուղեկցում է երեխային նախադպրոցական մանկության ամբողջ շրջանում: Խաղալիքը համարվում է խաղային գործունեության հիմնական միջոց: Յուրաքանչյուր տարիքի երեխաների համար բնորոշ են առանձնահատուկ խաղալիքներ: Խաղալիքը այն առարկան է, որը հատուկ ստեղծված է խաղերի համար: Յուրաքանչյուր խաղալիք արատացնում է կոնկրետ առարկա, նրա սիմվոլն է և ունի իր ֆունկցիան: Խաղալիքը ընդլայնում է երեխաների աշխարհայացքը, հարստացնում նրա գիտելիքները, դաստիարակում հետաքրքրություն իրականության երևույթների նկատմամբ, նպաստում ընկերասիրական փոխհարաբերությունների, համաձայնեցված գործողությունների ձևավորմանը: Խաղալիքը մեծ նշանակություն ունի երեխաների դաստիարակման գործում, նրա խաղերի հարստացման, բովանդակալից դարձնելու գործում:

Խաղալիքը երեխաներին մղում է խաղալու, օգնում իրականացնելու մտահղացումները, առաջացնում բարի, ջերմ զգացումներ: Երեխան ամբողջ հոգով

կապվում է իր խաղալիքների հետ, նրբորեն սիրում, գորգուրում, նույնիսկ հին, դեմքը տրորված տիկնիկին:

Երեխաների մեծանալու հետ փոփոխվում են, բազմազան են դառնում խաղալիքները: Խաղալիքը բավականին նուրբ առարկա է, ուստի նրա կյանքը կարճ է:

Խաղալիքների տեսակները տարբեր են՝

- կերպարային,
- տեխնիկական,
- խաղալիք-զվարճալիքներ,
- դիմակահանդեսային
- խաղալիքներ,
- սպորտային-մոտորային խաղալիքներ,
- երաժշտական ձայներ արձակող խաղալիքներ,
- թատերական,
- դիդակտիկ
- Կան նաև ինքնաշեն խաղալիքներ, որոնք պատրաստում են ծնողները, դաստիարակները, երեխաները:

Պատրաստելով խաղալիք, երեխան դժվարություններ է հաղթահարում, ուրախանում հաջողության դեպքում, ստեղծագործում, աշխատանք կատարում: Երեխան ձգտում է խաղալիք պատրաստել ոչ միայն իր, այլև ուրիշների համար, որը ունի մեծ նշանակություն նրա բարոյական դաստիարակության համար:

Խաղալիքը մանկության արբանյակ է, խաղային գործունեության «նյութական հիմքը»: Երեխաներին խաղալիքներ են տրամադրվում համաձայն նրանց տարիքային առաձնահատկությունների և մանկավարժական խնդիրների:

Կրտսեր տարիքի երեխաների խաղալիքները պետք է ապահովեն նրանց շարժումների զարգացումը (խոշոր գնդակներ, գունավոր մեքենաներ):

Միջին խմբի երեխաներին տարբեր խաղալիքներից բացի հատկացվում է լրացուցիչ առարկաներ: Խաղալու ընթացքում ձեռք են բերում կոլեկտիվ խաղալու ունակություն:

Ավագ, նախադպրոցական տարիքի երեխաները խաղում են ավելի բարդ սյուժե ունեցող խաղալիքներով:

Երեխաները սիրում են խաղալիքներ ու խաղեր: Իսկ երեխայի զարգացման գործում նրանց դերը բավականին մեծ է: Օրինակ, երբ երեխան խաղալիք սայլակ է հրում, զարգանում է նրա մկանային համակարգը, հեծանիվ է վարում կամ մի ոտքով հարվածում է գնդակին, սովորում է հավասարակշռություն պահպանել, իսկ երբ նկարում է կամ որևէ բան է կառուցում, սովորում է կառավարել իր շարժումները, զարգանում է ստեղծագործելու կարողությունը: Երբ երեխայի խաղը ուղեկցվում է երգերով կամ ոտանավորներով, դա խթանում է նրա լեզվական կարողությունների զարգացմանը: Երբ երեխան խորանարդիկներով ինչ որ բան է կառուցում, հետևում է խաղի կանոններին, փորձում է գտնել հանելուկ-խաղի համապատասխան քարտերը, բեմականցնում է որևէ պատմվածք կամ բեմական շորերով որևէ բան է ցույց տալիս, զարգանում է նրա տրամաբանությունն ու ստեղծագործական ունակությունները: Նույնը տեղի է ունենում, երբ նա որևէ երաժշտական գործիք է նվագում կամ ձեռագործ աշխատանք է կատարում: Կան բազմաթիվ զարգացնող խաղալիքներ, որոնք նաև օգտագործվում են երեխաների ուսուցման գործընթացն ավելի հաճելի և արդյունավետ դարձնելու համար: Որոշ խաղալիքների միջոցով երեխաները սովորում են գույները, երկրաչափական պատկերները, թվերը և այլն:

Խաղալիքները պետք է այնպես դասավորված լինեն, որ երեխաները ազատ և ինքնուրույն օգտվեն, պետք է պահպանեն, սովորեցնել նրանց խաղից հետո խաղալիքները հավաքել, դասավորել իրենց տեղերում: Եթե երեխան սովորում է դա անել վաղ տարիքից, նրա մեջ մշակվում է ուշադիր, խնայողական վերաբերմունք առարկաների նկատմամբ, կազմակերպվածություն, հարգանք մարդկանց աշխատանքի նկատմամբ:

Խաղի դերը նախադպրոցական կրթության մեջ

Պարապմունքի պլան

Նպատակ- սովորեցնել նկարագրել առարկայի արտաքին տեսքը, հատկությունները, զարգացնել կապակցված խոսքը: Սովորեցնել խաղի միջոցով նկարագրել տարբեր առարկաներ՝ հնարավորություն տալով նրանց նկատելու և նշելու սովյալ խաղալիքի կարևոր հատկանիշները: Ստեղծել ուրախ, աշխույժ մթնոլորտ:

գարգացնել նկարագրության միջոցով հանելուկները գուշակելու կարողությունները, դաստիարակել հոգատար վերբերմունք խաղալիքների հանդեպ:

Խթանիչ- գեղագիտական ունակությունների նպատակով պայմանական պլանավորել էքսկուրսիա դեպի «Խաղալիքների արտադարկան ֆաբրիկա», որտեղ կարելի է դիտել խաղալիքների պատրաստման ընթացքը, շփվել աշխատակիցների հետ, տեսնել հաստոցները, այնտեղ էլ կիմանանք, թե ինչ նյութերից են պատրաստվում խաղալիքները:

Պատիարակ- Երեխաներ, այսօր մի հետաքրքիր աշխատանք ենք կատարելու միասին, պատրաստելու ենք տիկնիկ: Սեղանին դրված է գուլպա, բամբակ, թելեր, սոսինձ, կոճակ: Ինչպե՞ս պետք է պատրաստենք, որպեսզի ունենանք տիկնիկի գլուխը, գուլպայի մեջ կղնենք մի քիչ բամբակ և կկապենք: Տիկնիկն ունի նաև մարմին, նորից ավելացնենք բամբակ և կստանանք մարմինը:

Երեխաներ, տիկնիկը ինչո՞վ պետք է տեսնի, ո՞ր են աչքերը: Ապա նայենք, կոճակներով կարող ենք ստանալ աչքերը: Սոսնձենք: Մի կոճակ սոսնձենք կստանանք քիթիկը, իսկ կարմիր մատիտով նկարենք բերանը: Էլ ի՞նչ է պակասում տիկնիկին, ուշադիր նայեք, ո՞ր են մազերը: Փորձենք թելերը սոսնձելով ստանանք տիկնիկի մազերը: Ձեզ դո՞ր է գալիս մեր պատրաստած տիկնիկը: Ապրեք երեխաներ: Բոլորս իրար օգնեցինք և ստացանք մեկ տիկնիկ: Բայց զիտեք երեխաներ, աշխարհում կան շատ բալիկներ, որոնք սիրում են տիկնիկների հետ խաղալ, իսկ այդքան շատ տիկնիկներ ինչպե՞ս պատրաստեն: Ինչքա՞ն աշխատանք կատարեցինք ամբողջ խմբով, ինչ նյութեր օգտագործեցինք, որ ստացանք այս տիկնիկը: Իսկ այդքան շատ տիկնիկները պատրաստվում են խաղալիքների ֆաբրիկայում:

Իմաստի ընկալում

Պատիարակ- Երեխաներ, ապա ուշադիր նայեք, սեղանին դրված է գնդակ, մեքենա, տիկնիկ, պարան, շախմատ, արջուկ. ինչե՞ր են սրանք:

Երեխաներ- Խաղալիքներ:

Պատիարակ- Իսկ ինչի համար են խաղալիքները:

Երեխա- Խաղալու:

Պատիարակ- Իսկ խաղալիս ուրախանո՞ւմ եք, թե՞ տխրում:

Երեխաներ- Ուրախանում:

Պատիարակ- Ապա նայեք այս խաղալիքներին, բոլորն իրար նմա՞ն են:

Երեխաներ- Ո՛չ:

Դաստիարակ- Այո, խաղալիքները տարբեր են: Իսկ ինչո՞վ են տարբեր:

Երեխաներ- Ձևով, գույնով, չափով, նյութով:

Դաստիարակ- Այ գնդակը, ինչպիսի՞նն է:

Երեխա- Կլոր է, կարմիր, ռեզինե:

Դաստիարակ- Իսկ նապաստա՞կը:

Երեխա- Փափուկ, սպիտակ, մեծ:

Դաստիարակ- Ապա նայեք մեքենային:

Երեխա- Մեքենան մետաղյա է, կանաչ է, փոքր:

Դաստիարակ- Ինչպես ասացինք, խաղալիքները պատրաստում են տարբեր երկրներում, հատուկ ֆաբրիկաներում, որտեղից էլ այն ուղարկում են խանութները: Հայաստանում նույնպես արտադրում են խաղալիքներ, որոնք էկոլոգիապես մաքուր են: Երեխաներ, կան խաղալիքներ, որոնք փայտից են, ռեզինից, պլաստիկից, կտորից: Կան բակային, սեղանային խաղալիքներ: Ապա ասացեք, սա ի՞նչ խաղալիք է:

Երեխա- Տիկնիկ:

Դաստիարակ- Դո՞ւր է գալիս քեզ տիկնիկը:

Երեխա- Ունեմ խելոք մի տիկնիկ, ինձ հետ լվացք է անում, քուն է մտնում միշտ ինձ հետ, ինձ հետ քնից արթնանում:

Դաստիարակ- Ահա ևս մի խաղալիք, ի՞նչ է սա:

Երեխա- Արջուկ:

Դաստիարակ- Ինչպիսի՞նն է արջուկը:

Երեխա- Շատ համեստ է իմ արջուկը, չի սիրում, որ գովեմ իրեն, միայն մի քիչ համառ է նա, հաց չի ուտում, որ մեծանա:

Դաստիարակ- Երեխաներ, խաղալիքները որտե՞ղ են ապրում:

Երեխա- Տանը, խանութում, մանկապարտեզում:

Դաստիարակ- Իսկ ինպե՞ս պետք է վերաբերվենք խաղալիքների հետ:

Երեխա- Չկոտրենք, լվանանք, խնամքով, հոգատար լինենք: խաղալուց հետո հավաքենք, դնենք իրենց տեղերում:

Դաստիարակ- Իսկ հիմա, հանելուկ եմ առաջարկում: Ինչքան խփես լաց չի լինի, ավելի ուրախ կթոչկոտի:

Երեխա- Գնդակ:

Դաստիարակ- Աղջիկ եմ սիրունիկ, ոչ խոսում եմ, ոչ ուտում: Քնից չեմ կշտանում ու երբեք չեմ մեծանում:

Երեխա- Տիկնիկ:

Դաստիարակ- Փափուկ կտորից գազան է հրճվալի, ունի թաթեր, ականջներ, պոչիկ, սիրում է մեղր, ապրում է որջում, ո՞ւմ է հիշեցնում:

Երեխա- Արջուկ:

Դաստիարակ- Հիմա ուշադիր. գրատախտակին փակցված են նկարներ, իսկ սեղանին դրված են խաղալիքների պատկերներ: Ապա ուշադիր նայեք, որ խաղալիքով, որտեղ պետք է խաղանք:

Մի քանի երեխաներ ընտրում են խաղալիքի նկարներ և փակցնում նկարի մոտ, թե որտեղ կարելի է խաղալ այդ խաղալիքով:

Դաստիարակ- Իսկ հիմա հարց եմ տալիս, իսկ դուք պատասխանում եք, եթե ճիշտ է՝ ծափ ենք տալիս, իսկ եթե սխալ՝ ոտքով դոփում ենք:

- ✓ Պարանով խաղում ենք խոհանոցում:
- ✓ Գնդակով խաղում ենք բակում:
- ✓ Շախմատով խաղում ենք հողերի վրա և այլն:

Հիմա կխաղանք մեկ այլ խաղ: Մի քանի խաղալիքներ սեղանի վրա դասավորել, մի երեխայի աչքերը փակել, թաքցնել մի խաղալիք, հետո բացել աչքերը և հարցնել, թե որ խաղալիքը չկա: Ճիշտ գուշակելուց հետո ցույց տալ թաքնված խաղալիքը և երեխան պետք է նկարագրի այն:

Դաստիարակ- Երեխաներ, ես ուզում եմ ձեզ մի գաղտնիք ասել: Մի անգամ, երբ դուք արդեն գնացել էիք տուն, ես լսեցի ինչ-որ ձայն խմբասենյակում, պարզվեց, որ դրանք խաղալիքներն էին, պատմում էին իրար, որ ինչ-որ երեխա խաղացել է իր հետ և...մի տիկնիկ էր ու բողբում էր, որ մի աղջիկ իրեն նեղացրել է, զգել է հատակին: Եկեք տիկնիկին խոստանանք, որ այլևս չենք նեղացնի իրեն և մեր պատրաստած երաժշտական խաղալիքներով կուրախացնենք իրեն:

Դուք արդեն իմացաք երեխաներ, որ խաղալիքներն էլ կարող են խոսել և զգալ, ուրեմն՝ այլևս չենք նեղացնի նրանց, կվերաբերվենք խնամքով, չէ որ նրանք մեր ընկերներն են: Իսկ հիմա, նստեք սեղանների շուրջ, որտեղ դրված են խճանկարներ, դրանք հավաքելով կստանանք պատկերներ, ապա տեսնենք, ինչ պատկերներ ենք ստանալու:

Կշռադասում

Սեղանների շուրջ աշխատելով, խճանկարները հավաքելով, նրանցից յուրաքանչյուրը ստացավ խաղալիքների պատկերներ (տիկնիկ, արջուկ, մեքենա, նապաստակ, գնդակ, ինքնաթիռ):

1. Ի՞նչ իմացանք
2. Ինչի՞ մասին խոսեցինք
3. Ի՞նչ աշխատանք կատարեցինք
4. Ի՞նչ եք անում, երբ ձեր խաղալիքը կոտրվում է



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Խաղալիքը երեխայի ամենամտերիմ ընկերն է, խաղալիքի միջոցով երեխան
իրականացնում է իր բոլոր երազանքները և ցանկությունները»:*

Ջանի Ռոդարի

Այսքան տարիների աշխատանքային փորձից ելնելով, իմ կարծիքով, ես հասել եմ իմ նպատակին: Կարողացա երեխաների մեջ դաստիարակել սեր խաղալիքի հանդեպ, տվեցի գիտելիք, թե ինչպես են պատրաստվում խաղալիքները, պարապմունքը անցավ ուրախ և աշխույժ մթնոլորտում:

Իմ կարծիքով, եթե խմբասենյակը ավելի մեծ լիներ, լինեին խաղալիքների համապատասխան կենտրոններ, ունենայի գունավոր ռեզինե կամ փայտե կառուցողական նյութեր, պարապմունքն ավելի արդյունավետ կստացվեր: Խմբասենյակում չկա խաղալիքների բավարար տեսականի և համապատասխան պահարաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական մանկավարժություն, 2-րդ մաս, Եր., 1985
2. «Նախաշավիղ» 3, Եր., 2010
3. «Նախաշավիղ» 4, Եր., 2012
4. «Նախաշավիղ» 6, Եր., 2011
5. «Նախաշավիղ» 6, Եր., 2010
6. «Նախաշավիղ» 2, Եր., 2013
7. «Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Եր., 2011
8. «Նախաշավիղ» 8, Եր., 2010
9. «Խոսքի զարգացման պարապմունքները» մանկապարտեզի միջին խմբում, Հ. Միտոյան, Լ. Մմբատյան, Լ. Սարգսյան, Եր., 2013
10. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Հասմիկ Միտոյան, Եր., 2020